ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 236-Ա
« 19 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025Թ.

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱԼԲԵՐՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՐԻՆԵ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի բ) կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով և հիմք ընդունելով Ալբերտ Գևորգյանի հետ կնքած 2022 թվականի հունվարի 10-ի N479 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «դ» ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ալբերտ Գևորգյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2022 թվականի հունվարի 10-ի N479 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային վերջին օրը համարել 2025 թվականի սեպտեմբերի 22-ը:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի տնօրենի տեղակալ Կարինե Արզումանյանի վրա:

3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025թ սեպտեմբերի 19 -ի
N 256-Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Վահան Աբրահամյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Անդամներ՝

Գվիտոն Դավթյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում փորձագետ
Մայիս Նազարյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող